Ընկերության տնօրեն. Փոթի նավահանգստում կուտակվել են արտահանվող բեռների մոտ 300 կոնտեյներ

http://news.am/arm/news/127517.html

Նոյեմբեր 06, 2012 | 17:55

Վրացական Փոթի նավահանգստի աշխատակիցների գործադուլը շարունակվում է, եւ եթե շաբաթ օրը դեռ շարունակում էին աշխատել կառամատույցն ու նավերի մուտքն ու ելքն ապահովող ծառայությունը, ապա նրանք նույնպես միացել են գործադուլավորներին: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրույցում հայտնել է «Ապավեն» ընկերության գործադիր տնօրեն Գագիկ Աղաջանյանը՝ նշելով, որ Փոթի նավահանգիստն ամբողջովին չի աշխատում:

Աղաջանյանի խոսքով, խնդիր է առաջացել արտահանվող բեռների հետ կապված: «Դեռեւս շաբաթ առավոտյան Փոթի նավահանգստում եղել է 129 կոնտեյներ: Այսօրվա դրությամբ դրանց թիվն ավելացել է: Միայն մեր ընկերությունը Փոթիում ունի 180 կոնտեյներ, իսկ նրանց ընդհանուր թիվը 300 է»:

Աղաջանյանի խոսքով, նրանք համաձայնություն են տվել, որպեսզի արդեն երրորդ նավը բեռնաթափվի Բաթումիի նավահանգստում: Փոթիի փոխարեն նավերը կբեռնաթափվեն Բաթումիում, սակայն, Աղաջանյանի խոսքով, այս դեպքում մեկ այլ խնդիր է առաջանում: «Բաթումիի նավահանգիստը նախատեսված չէ նավերի բեռնաթափման համար: Բացի այդ Բաթումիի նավահանգստում լուրջ խնդիր է առաջանում բեռների կուտակման հարցում, քանի որ այնտեղ չկան տերմինալներ»: Ներկայումս բանակցություններ են ընթանում վրացական կողմի հետ, որպեսզի հնարավորություն ստեղծվի արագ կերպով Բաթումիի նավահագստից դուրս բերվեն բեռները, հակառակ դեպքում. «Այնտեղ բեռների կուտակումներ կառաջանան եւ նավահանգիստը պարզապես կուլ կգնա»:

Ինչ վերաբերում է Բաթումիի նավահանգստից բեռնափոխադրման գներին, ապա Աղաջանյանի խոսքով, Փոթիից եւ Բաթումիից մեկ կոնտեյների տեղափոխման տարիֆը շատ չեն տարբերվում: Գոյություն ունի Փոթիից Հայաստան տեղափոխման հատուկ տարիֆ, սակայն Բաթումիից Երեւան տեղափոխման տարիֆ չկա, քանի որ դրա անհրաժեշտությունը չի եղել:

Նրա խոսքով, բանակցություններ են ընթանում «Վրացական երկաթգիծ» ընկերության հետ այն նույն տարիֆը պահպանելու համար, որը գործում է Փոթի-Երեւան գնացքի համար: «Մենք մեր հիմքերն ունենք ենթադրելու, որ այդ առաջարկը կընդունվի, եւ տարիֆը կփոփոխվի աննշան չափով: Տեղի ունեցող դեպքերը ոչ մի կերպ չեն անդրադառնա առաջին անհրաժեշտության ապրանքների գների վրա: Եթե նման բան տեղի ունենա, ապա մարդիկ պարզապես կօգտվեն ստեղծված իրավիճակից»

Նշենք, որ Փոթի ծովային նավահանգստի աշխատակիցները նոյեմբերի 1-ից անժամկետ գործադուլ են հայտարարել՝ հայտնելով, որ չեն դադարեցնի այնքան ժամանակ, քանի դեռ աշխատավարձերի բարձրացման եւ աշխատանքային պայմանների բարելավման իրենց պահանջները չեն բավարարվել: